ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՎԻՎ/533/2025

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան **15 դեկտեմբերի 2025թ.**

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով), կազմով՝ Արմեն Մարուխյանի (նիստը նախագահող), Արամայիս Փաշինյանի և Մարիամ Գալստյանի, 2025 թվականի դեկտեմբերի 15-ին քննելով «Միացյալ Քրիստոնեա Հայաստան» կուսակցության ղեկավար կազմի անդամ Վարդան Խաչիկի Թունյանցի կողմից 2024 թվականի գույքի և եկամուտների հայտարարագիրը (այսուհետ՝ նաև Հայտարարագիր) «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված ժամկետները լրանալուց հետո՝ 30 օրվա ընթացքում, Հանձնաժողովի գրավոր ծանուցման հիման վրա չներկայացնելու համար Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 169.28-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված վարչական իրավախախտման վերաբերյալ ՎԻՎ/533/2025 գործը՝

Պ Ա Ր Զ Ե Ց

I. Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթի նախապատմությունը

1.1 Հանձնաժողովը, «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով վերապահված գործառույթների շրջանակում, «Հանրային ծառայության մասին» օրենքով (այսուհետ՝ նաև Օրենք) սահմանված հայտարարագրերը, մասնավորապես՝ 2024 թվականի տարեկան հայտարարագրերը Օրենքով սահմանված ժամկետում ներկայացված լինելու փաստի ստուգման արդյունքում տարեկան հայտարարագրերը Օրենքով սահմանված ժամկետում ներկայացված լինելու

փաստի ստուգման արդյունքում պարզել է, որ «Միացյալ Քրիստոնեա Հայաստան» կուսակցության ղեկավար կազմի անդամ Վարդան Խաչիկի Թունյանցի Հայտարարագիրը ներկայացված չէ Հանձնաժողով:

1.2 Հանձնաժողովի կողմից 2025 թվականի հոկտեմբերի 16-ին թիվ 01/3984/7-2025 գրությամբ Վարդան Թունյանցին ծանուցում է ուղարկվել Հայտարարագիրը ներկայացնելու պարտականության վերաբերյալ, միաժամանակ առաջարկվել է ծանուցումը ստանալուց հետո՝ 30 օրվա ընթացքում, լրացնել և ներկայացնել համապատասխան հայտարարագիրը: Միաժամանակ, Վարդան Թունյանցը ծանուցվել է, որ հայտարարագիրը 30 օրվա ընթացքում չներկայացնելու դեպքում, անհրաժեշտ է ծանուցումը ստանալուց հետո՝ 31-րդ օրը՝ ժամը 09:00-ին ներկայանալ Հանձնաժողով մասնակցելու վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության կազմելուն:

«Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 10-րդ հոդվածի հիման վրա սահմանված անհատական ծանուցման ընթացակարգով՝ էլեկտրոնային փոստով, 2025 թվականի հոկտեմբերի 17-ին և հոկտեմբերի 23-ին ուղարկվել են ծանուցումներ:

Համաձայն՝ օրենքով սահմանված ընթացակարգի՝ նշված գործողություններից հետո՝ հնգօրյա ժամկետում, այն կարդալու մասին էլեկտրոնային հավաստում չստանալու կամ ծանուցմամբ պահանջվող գործողության ամբողջական կամ մասնակի կատարում կրկին չլինելու դեպքում ծանուցումն ուղարկվում է փոստային կապի միջոցով՝ պատվիրված նամակով՝ ծանուցումն ստացող ֆիզիկական անձի դեպքում՝ բնակչության պետական ռեգիստրում հաշվառված հասցեով: Ծանուցումն ուղարկվել է հոկտեմբերի 29-ին: Օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանվում է, որ անձը համարվում է պատշաճ ծանուցված վերոնշյալ գործողությունները կատարելուց հետո ծանուցումը ևս մեկ անգամ ծանուցվող անձի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով ուղարկելու և Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում անհատական ծանուցման առկայության վերաբերյալ ծանուցում հրապարակելուց հետո՝ տասներորդ օրը: Նշված ծանուցումը Վարդան Թունյանցն ստացել է 2025 թվականի նոյեմբերի 3-ին:

1.3 2025 թվականի դեկտեմբերի 4-ին պատշաճ ծանուցված Վարդան Թունյանցի բացակայությամբ կազմվել է թիվ ՎԻՎ 504/25 արձանագրությունը՝ Վարչական

իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված իրավախախտման հատկանիշներով:

1.4 Հանձնաժողովի կողմից 2025 թվականի դեկտեմբերի 5-ին թիվ 01/4667/4-2025 գրությամբ Վարդան Թունյանցին ծանուցում է ուղարկվել ծանուցումն ստանալուն հաջորդող երրորդ աշխատանքային օրը (երրորդ աշխատանքային օրն է 2025 թվականի դեկտեմբերի 15-ը)՝ ժամը 10:20-ին, վերոնշյալ առերևույթ իրավախախտման հիմքով կազմված արձանագրության և վերաբերելի նյութերի հիման վրա իրականացվելու է գործի քննություն: Նշված ծանուցումը վերջինս ստացել է 2025 թվականի դեկտեմբերի 12-ին (հիմք՝ փոստային առաքանի APC0130816263AM):

1.5 2025 թվականի դեկտեմբերի 15-ին վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության տեղի և ժամանակի մասին պատշաճ ծանուցված Վարդան Թունյանցի բացակայությամբ տեղի է ունեցել վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննություն:

II. Վարույթի մասնակցի ներկայացրած դիրքորոշումները ու պարզաբանումները

Վարույթի ընթացքում Վարդան Խաչիկի Թունյանցի կողմից պարզաբանումներ չեն ներկայացվել:

III. Գործի քննության ընթացքում հաստատված հանգամանքները

Հանձնաժողովն ուսումնասիրել է թիվ ՎԻՎ/533/2025 գործում առկա նյութերը, կատարել հանգամանքների քննություն, որի արդյունքում հաստատված է համարում.

3.1 Արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի էլեկտրոնային միասնական գրանցամատյանում առկա տվյալների համաձայն՝ Վարդան Թունյանցը 31.08.2021թ.-ից առ այսօր հանդիսացել է «Միացյալ Քրիստոնեա Հայաստան» կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի անդամ:

3.2 «Միացյալ Քրիստոնեա Հայաստան» կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի անդամ Վարդան Խաչիկի Թունյանցը «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքի 28.1-ին հոդվածի 1-ին մասով սահմանված կարգավորումների համաձայն՝ հանդիսացել է հայտարարատու պաշտոնատար անձ:

3.3 Վարդան Խաչիկի Թունյանցի կողմից 2024 թվականի գույքի և եկամուտների հայտարարագիրը «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված ժամկետը լրանալուց հետո՝ 30 օրվա ընթացքում, Հանձնաժողովի գրավոր ծանուցման հիման վրա չի ներկայացվել Հանձնաժողով:

3.4 Գործի քննության օրվա դրությամբ Վարդան Խաչիկի Թունյանցի Հայտարարագիրը ներկայացվել է Հանձնաժողով:

IV. Որոշումն ընդունելու իրավական հիմքերը և հիմնավորումները

4.1 «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքի 28.1-ին հոդվածի 1-ին մասի համաձայն՝ **կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի անդամները**, իսկ այլ ղեկավար մարմինների դեպքում այդ մարմնի անդամները (այսուհետ նաև՝ հայտարարատու պաշտոնատար անձինք) պարտավոր են Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով ներկայացնել իրենց գույքի և եկամուտների հայտարարագիր (..):

4.2 Նույն Օրենքի 28.1-ին 1-րդ մասի համաձայն՝ կուսակցության հայտարարատու պաշտոնատար անձինք ներկայացնում են պաշտոնը ստանձնելու, դադարեցնելու, ինչպես նաև **տարեկան հայտարարագրեր:**

4.3 Օրենսգրքի 169.28 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձի կողմից «Հանրային ծառայության մասին» օրենքով նախատեսված հայտարարագրերը «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված ժամկետները լրանալուց հետո՝ 30 օրվա ընթացքում, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի գրավոր ծանուցման հիման վրա չներկայացնելն առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով:

4.4 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը քննում և լուծում է հայտարարագրմանն առնչվող խախտումների վերաբերյալ գործեր:

4.5 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Վարչական

իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով՝ հաշվի առնելով սույն օրենքով սահմանված առանձնահատկությունները:

4.6 «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

4.7 Օրենսգրքի 252-րդ հոդվածի համաձայն՝ մարմինը ապացույցները գնահատում է իր ներքին համոզմունքով, որը հիմնված է գործի՝ իրենց ամբողջությամբ վերցված բոլոր հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա, ղեկավարվելով օրենքով և իրավագիտակցությամբ:

4.8 Օրենսգրքի 244.17-րդ հոդվածի համաձայն՝ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննում և վարչական տույժեր է նշանակում Հանձնաժողովը:

4.9 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հանձնաժողովը Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի արդյունքում ընդունում է որոշումներ, որոնք կարող են բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան՝ դատական կարգով:

4.10 Օրենսգրքի 21-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե կատարված վարչական իրավախախտումը նվազ նշանակություն ունի, գործը վճռելու համար լիազորված մարմինը (պաշտոնատար անձը) կարող է խախտողին ազատել վարչական պատասխանատվությունից և բավարարվել բանավոր դիտողությամբ:

4.11 Օրենսգրքի 282-րդ հոդվածի համաձայն՝ քննելով վարչական իրավախախտման վերաբերյալ գործը, մարմինը (պաշտոնատար անձը) ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝ 1) վարչական տույժ նշանակելու մասին, 2) գործի վարույթը կարճելու մասին: Գործի վարույթը կարճելու մասին որոշում ընդունվում է նաև բանավոր դիտողություն հայտարարելու դեպքում:

Սույն գործով հաստատված փաստական հանգամանքների նկատմամբ կիրառելի իրավական նորմերի վերլուծության արդյունքում Հանձնաժողովն արձանագրում է.

Օրենսգրքի 21-րդ հոդվածը սահմանել է, որ եթե կատարված վարչական իրավախախտումը նվազ նշանակություն ունի, գործը վճռելու համար լիազորված մարմինը (պաշտոնատար անձը) կարող է խախտողին ազատել վարչական պատասխանատվությունից և բավարարվել բանավոր դիտողությամբ:

Արարքի նվազ նշանակությունը գնահատելիս անհրաժեշտ է հաշվի առնել այն հանգամանքը, որ թեև ձևականորեն արարքը կարող է պարունակել «Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով» սահմանված արարքի հատկանիշներ, սակայն ֆիզիկական կամ իրավաբանական անձին, հասարակությանը, պետությանը այնպիսի էական վնաս չի պատճառվել, որի հիմքով սահմանված պատասխանատվությունը դիտարկվի համաչափ:

Նվազ կարևորությունը կիրառելիս անհրաժեշտ է հաշվի առնել խախտման բնույթը, դրա որակական կողմը, ինչպես նաև խախտում թույլ տված անձի վերաբերմունքը խախտման նկատմամբ:

Հանձնաժողովն արձանագրում է, որ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածը նպատակ է հետապնդում ապահովել պետական պաշտոն զբաղեցնող անձի (ինչպես նաև վերջինիս ընտանիքի անդամի) հանրային հաշվետվողականությունը, վերջինիս հանրային գործունեության նկատմամբ վստահությունը, պետական պաշտոն զբաղեցնող անձի (ինչպես նաև վերջինիս ընտանիքի անդամի) կոռուպցիոն ռիսկերից զերծ գործունեությունը:

Խախտման հիմքով պատասխանատվություն սահմանելու հարցը որոշելու համար Հանձնաժողովը գտնում է, որ անհրաժեշտ է յուրաքանչյուր գործով գնահատել, թե արդյոք այդ խախտումը հանգեցրել է նորմով պաշտպանվող իրավահարաբերությունների բուն էության խաթարմանը:

Տվյալ դեպքում «Միացյալ Քրիստոնեա Հայաստան» կուսակցության ղեկավար կազմի անդամ Վարդան Խաչիկի Թունյանցը «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքի իմաստով հանդիսանալով հայտարարատու պաշտոնատար անձ կրել է 2024 թվականի գույքի և եկամուտների տարեկան հայտարարագիրը Հանձնաժողով ներկայացնելու պարտականություն:

Ընդ որում, Վարդան Խաչիկի Թունյանցի կողմից մինչև գործի քննության օրը ներկայացրել է Հայտարարագիրը, ինչի արդյունքում Հանձնաժողովը գտնում է, որ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի դրույթներով պաշտպանվող իրավահարաբերությունների էությունը չի խաթարվել:

Ելնելով վերոգրյալից, ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, 26-րդ հոդվածով, «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքի 28.1-ին հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, Օրենսգրքի 21-րդ հոդվածի 1-ին մասով, 282-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և 283-րդ հոդվածով՝ Հանձնաժողովը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վարդան Խաչիկի Թունյանցին ազատել վարչական պատասխանատվությունից և հայտարարել բանավոր դիտողություն՝ կարճելով ՎԻՎ/533/2025 վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Վարդան Խաչիկի Թունյանցին այն սահմանված կարգով հանձնելու (հանձնված համարվելու) հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂԻՆ
ՓՈԽԱՐԻՆՈՂ՝

ԱՐՄԵՆ ՄԱՐՈՒԽՅԱՆ